

Գոռ Ղազարյան

Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի մագիստրոս
ghazaryan3329@gmail.com

ԼԵՌՆԱՐԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ*

Հիմնաբառեր. Լեռնահայաստանի Հանրապետություն, Սյունիք, Ջանգեզուր, պետական կարգ, կառավարություն, խորհրդարան, Գարեգին Նժդեհ

Ներածություն

1920 թ. դեկտեմբերին, Հայաստանի Հանրապետության հարկադրված խորհրդրդայնացումից հետո, Ջանգեզուրը հրաժարվեց ընդունել ստեղծված քաղաքական նոր իրադրությունը՝ այն համարելով Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի դեմ համատեղ գործած ռազմաքաղաքական գործողությունների հետևանք (Վրացեան 1967, 161–162): Ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակում 1920 թ. դեկտեմբերի 25-ին Համազանգեզուրյան 1-ին համագումարը որոշեց երկրամասը հռչակել ինքնավար, մինչև այն քաղաքական հնարավորություն կունենար կրկին վերամիավորվելու «իր մայր երկրի՝ Հայաստանի հետ» (Վրացեան 1967, 163): Ստեղծվեց Ինքնավար Սյունիքի Հանրապետությունը, որը 1921 թ. ապրիլի 26-ին հրավիրված Համազանգեզուրյան 2-րդ համագումարում վերանվանվեց Լեռնահայաստանի Հանրապետություն (Նժդեհ 2021, 109–111): Թեպետ Սյունիք-Լեռնահայաստանը (Ինքնավար Սյունիք և Լեռնահայաստան) միջազգային ճանաչում չունեցավ, սակայն իր գոյության կարճատև և ռազմաքաղաքական առումով խրթին ժամանակահատվածում (մոտ 7 ամիս՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ից մինչև 1921 թ. հուլիսի կեսեր) կարողացավ ձևավորել պետությանը բնորոշ մի շարք ինստիտուտներ, ունենալ կանոնակարգված պետական համակարգ ինչպես նաև հաստատել պետական խորհրդանիշներ:

Հայ իրականության մեջ Սյունիք-Լեռնահայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգին և սահմանադրությանը որոշ անդրադարձներ կատարվել են (Խաչատրյան և Զիլֆուղարյան 2004; Զիլֆուղարյան 2008; Հարությունյան 2022), սակայն խնդիրը դեռևս կարոտ է մանրամասն վերլուծության և համակողմանի լուսաբանման: Մասնավորապես անհրաժեշտ է ցույց տալ, թե Համազանգեզուրյան 1-ին և 2-րդ համագումարներում ընդունված որոշումներն ինչպես էին կիրարկվում իրականության մեջ:

Մույն աշխատանքում փորձ է կատարվել պատմական սկզբնաղբյուրների և գիտական գրականության քննության հիման վրա հնարավորինս ամբողջական

* Ստացվել է 05.08.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 20.08.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 09.12.2025 թ.:

պատկերացում կազմել Լեռնահայաստանի Հանրապետության պետական համակարգի մասին. փորձել տարբերակել երկրի պետական կարգը, ներկայացնել պետական ինստիտուտների կառուցվածքը և գործունեությունը, ինչպես նաև իշխանության կազմակերպման մեջ ժողովրդավարական սկզբունքների կիրարկումը:

Ինքնավար Սյունիքի կառավարման համակարգի ձևավորումը

1920թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցավ Համագնագեզուրյան 1-ին համագումարը, որին մասնակցում էին Ջանգեզուրի բոլոր շրջանների գյուղերից (69 գյուղ) ընտրված և ուղարկված 100 պատգամավորները, Ջանգեզուրի բոլոր Շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները և սպարապետ Գ. Նժդեհը՝ ընդհանուր 118 հոգի (Վրացեան 1967, 160; Գեորգեան 1991, 126–127): Համագումարում քննարկվեց Ինքնավար Սյունիքի կառավարման ձևը, իշխանության կազմակերպումը, արտաքին քաղաքականությունը և նորաստեղծ պետության համար հիմնարար այլ հարցեր: Այն փաստացի ուներ սահմանադիր ժողովի նշանակություն (Վրացեան 1967, 160–161): Մտքերի փոխանակություններից հետո համագումարը միաձայն որոշում է. «Ջանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, լինելով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ» (Վրացյան 1993, 661): Համագումարը միաձայն հաստատեց Ինքնավար Սյունիքի կառավարման հիմնական սկզբունքները: Իշխանության կենտրոնատեղի ընտրվեց Գորիսը:

Խորհրդարանը: Համագումարը ճանաչվում է ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին (պառլամենտ), որին վերապահվում է «Սյունիքի բախտի լիակատար տնօրինությունը» (Վրացյան 1993, 661; Գեորգեան 1991, 126–127): Խորհրդարանը հրավիրվում էր տարեկան առնվազն երկու անգամ, իր դիվանի կողմից, իսկ բացառիկ պայմաններում իր անդամների կեսի կամ դիվանի պահանջով: Խորհրդարանի անդամներն ընտրվում էին երկրի բնակչության կողմից հետևյալ ձևով. մինչև 100 ծուխ (ընտանիք) ունեցող գյուղական համայնքը տալիս էր 1, 100-ից մինչև 200 ծուխ ունեցողները՝ 2, իսկ 200-ից ավել՝ 3 ներկայացուցիչներ: Ընտրությունները կատարվում էին «ընդհանուր սկզբունքներով և ընտրողական քառանդամ սիստեմով» (Վրացյան 1993, 661): Խորհրդարանն ընտրում էր 6 ամիս ժամկետով 9 հոգուց բաղկացած կառավարություն և ցրվում: Կառավարության անդամ կարող էր ընտրվել նաև խորհրդարանի անդամ չհանդիսացող անձ (Վրացեան 1967, 163): Սա հնարավորություն էր տալիս օգտագործելու փորձառու մասնագետների ներուժը՝ հիմնվելով նրանց պրոֆեսիոնալիզմի վրա, և միաժամանակ ապահովելով գործադիր իշխանության ավելի մեծ անկախություն:

Կառավարությունը: Մինչև խորհրդարանի նոր նստաշրջանը՝ կառավարությանն էր անցնում երկրի զինվորական և քաղաքացիական բոլոր գործերի դեկավարությունը: Կառավարությունն էր իրագործում խորհրդարանի ընդունած բոլոր օրենքներն ու որոշումները: Կառավարությանն էր վերապահվում զինվորական ընդհանուր հրամանատարի՝ սպարապետի նշանակումը և պաշտոնից ազատումը, պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու

իրավունքը, իսկ արտակարգ դեպքերում՝ այն վերապահվում էր նաև սպարապետին: Բոլոր պատասխանատու պաշտոնյաները հաստատվում էին կառավարության կողմից՝ վարիչների առաջնորդությամբ (Վրացեան 1967, 164):

Կառավարությունն ունենում էր հետևյալ վարչությունները. 1. ներքին գործերի, 2. արտաքին գործերի, 3. պարենավորման, 4. արդարադատության, 5. ֆինանսական, 6. լուսավորության, 7. առևտրա-արդյունաբերության, 8. հողային, 9. ճանապարհների հաղորդակցության, 10. խնամատարության: Ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող բոլոր կարևորագույն խնդիրները, լուծվում էին ոչ թե վարչությունների ղեկավարների, այլ կառավարության ամբողջ կազմի կողմից:

Շրջանային գործադիր մարմիններ: Սյունիքը բաժանվում էր հետևյալ շրջանների՝ Բուն Ջանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան: Յուրաքանչյուր շրջանում ձևավորվում էր 3 կամ 5 հոգուց բաղկացած շրջանային գործադիր մարմին (կախված շրջանի մեծությունից), որի անդամներն ընտրվում էին 6 ամիս ժամկետով՝ խորհրդարանի նույն շրջանից ուղարկված անդամների կողմից: Շրջանային գործադիր մարմիններին էր վերապահվում իրենց շրջանի ներքին՝ համապետական բնույթ չկրող հարցերի լուծումը: Շրջանային գործադիր մարմիններն ունենալու էին իրենց հետևյալ մասնաճյուղերը. 1. ներքին գործերի, 2. պարենավորման, 3. զինվորական: Շրջանային մարմիններին կից գործելու էին նաև ազիտացիոն բյուրոներ: Դրանց հիմնական նպատակը, ամենայն հավանականությամբ, երկրի պետական գաղափարախոսության և քաղաքականության տարածումն էր ժողովրդի լայն զանգվածների մեջ: Շրջանային մարմիններն իրենց շրջանի գյուղերում կազմակերպելու էին գյուղական զինվորական վաշտեր և գյուղական ինքնապաշտպանության կոմիտեներ: Որոշումն ուներ կարևոր ռազմաքաղաքական նշանակություն՝ միաժամանակ ուղղված լինելով զինված ուժերի համալրմանն ու անվտանգության համակարգի զարգացմանը, ինչպես նաև գյուղերում պետական իշխանության ամրապնդմանը և պետություն-հասարակություն փոխադարձ վստահության բարձրացմանը: Շրջանային գործադիր մարմիններն իրենց գործունեության մասին միշտ զեկուցում են կառավարությանը՝ ներկայացնելով հաշվետվություն: Շրջաններին վերաբերող բոլոր խոշոր և կարևոր հարցերը վճռվում էին կառավարության կողմից: Յուրաքանչյուր շրջան կամ գավառակ ունենում էր իր գավառակապետը և շրջանային կոմիսարները, որոնց ընտրում էր շրջանային գործադիր մարմինը իր միջից և որոնք հաստատվում էին կառավարության կողմից (Վրացյան 1993, 662–663):

Գյուղական կոմիսարներ: Յուրաքանչյուր գյուղ կամ համայնք ունենում էր իր գյուղական կոմիսարը¹, իսկ 100-ից ավելի ծովա ունեցող գյուղերն ունենում էին նաև կոմիսարի օգնական, երկու պաշտոնյաներն էլ ընտրվում էին գյուղի բնակչության կողմից և հաստատվում գյուղի շրջանային գործադիր մարմնի կողմից (Վրացյան 1993, 663): Այս մոդելը հավասարակշռում էր տեղական ինքնավարութ-

¹ Կոմիսարը իշխանության լիազոր ներկայացուցիչն է, ով հսկում ու ղեկավարում է համայնքի գործերը (Մախասեանց 1944, 464):

յան և կենտրոնական վերահսկողության միջև եղած հարաբերությունները՝ հանդիսանալով ուժեղ կենտրոնացված պետության ձևավորման կարևոր մեխանիզմ:

Պետական վերահսկիչ մարմին: Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմինը լիազոր էր վերահսկել պետական բոլոր հիմնարկությունների, այդ թվում նաև բոլոր վարիչների հաշվետվություններն ու գործողությունները (Վրացյան 1993, 663): Այս համակարգը ստեղծում էր կենտրոնական իշխանությանն անմիջականորեն ենթակա հզոր վերահսկիչ մարմին: Որը, ըստ էության, Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանին կից գործող պետական վերահսկիչ մարմնի (Սաֆարյան 2018, 151) կառուցվածքի ընդօրինակումն էր: Դրա նպատակն էր ապահովել պետական քաղաքականության միասնական կիրառումը, կանխել տեղական իշխանությունների կամայականությունը, ինչպես նաև մեծացնել թափանցիկությունը՝ դրանով իսկ նվազեցնելով կոռուպցիայի ռիսկերը:

Սպարապետ: Ինքնավար Սյունիքի սպարապետն ուներ լայն լիազորություններ: Սպարապետին նշանակում կամ պաշտոնից ազատում էր կառավարությունը կամ խորհրդարանը: Զինվորական բոլոր տեսակի գործերը տարվում էին սպարապետի ղեկավարությամբ, որն այդ մասին իրազեկ էր դարձնում «պրեզիդիումին» (կառավարությանը): Թեպետ կառավարությանն էր վերապահված պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, սակայն, արտակարգ դեպքերում, այն վերապահվում էր նաև սպարապետին: Ինքնապաշտպանության հարցերին վերաբերող բոլոր ձեռնարկումները և դրանց իրագործումը կատարվելու էին սպարապետի կարգադրությամբ: Համագումարը պետական ուժիկների սահմանաչափերի որոշման հարցը նույնպես թողնում էր սպարապետին (Վրացեան 1967, 165; Գեորգեան 1991, 126–127): Արձանագրությունում կարդում ենք. «համագումարը միաձայն որոշում է հրավիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպես Սյունյաց սպարապետ և բռուն ծափահարություններով իր կատարյալ վստահության քվեն տալով, նրան իր բախտն է հանձնում» (Վրացյան 1993, 663–664): Ինչպես պարզ է դառնում համագումարի արձանագրությունից՝ սպարապետության գործակալության դերակատարությունը Ինքնավար Սյունիքում շատ ավելի մեծ էր, քան պարզապես զորքերի հրամանատար լինելը: Սա բնականաբար պայմանավորված էր Ինքնավար Սյունիքի կազմավորման և դրա պաշտպանության գործում Գ. Նժդեհի մեծ ավանդով և այն լայն ժողովրդավարությամբ, որը վայելում էր Սպարապետը Սյունիքում: Սիմոն Վրացյանի տողերում կարդում ենք. «Համագումարի կողմից նշանակված երկրի գերագույն իշխանութիւնը փաստօրէն հանդիսանում էր սպարապետ Նժդեհը: ...Նժդեհի անձնական յատկութիւնները և նրա արտակարգ ազդեցութիւնը ժողովրդի վրայ ստուերի մէջ են թողնում կառավարութիւնը կամ «դիվանը», որը գրեթէ բացառապէս զբաղում է երկրորդական խնդիրներով, քաղաքական բոլոր կարևոր հարցերը լուծում են ստանում սպարապետից, որի մէջ է մարմնանում Զանգեզուրի պետական ու ռազմական ոգին» (Վրացեան 1967, 165–166): Սակայն Գ. Նժդեհի իշխանությունը Ինքնավար Սյունիքում երբեք չվերածվեց ռազմական ռեժիմի: Ռազմական ռեժիմներում քաղաքական իշխանությունը գտնվում է զինվորականների ազդեցության ներքո, որոնք վերահսկողություն են իրականացնում կառավարության վրա: Ժողովրդավարական

արժեքները նման դեպքերում սովորաբար տեղի են տալիս: Սակայն Ինքնավար Սյունիքի պարագայում դա տեղի չունեցավ՝ անգամ ամբողջ ժամանակահատվածում երկրում գործող պատերազմական դրության պայմաններում (Նժդեհ 2002, 403), որն էական ազդեցություն ուներ կառավարման բնույթի վրա: Գ. Նժդեհի քաղաքական լեգիտիմությունը Սյունիքում հիմնված էր ոչ միայն պաշտոնական լիազորությունների, այլև խորը ժողովրդական վստահության ու հարգանքի վրա, որը ձևավորվել էր պատմական մարտահրավերների պայմաններում և վճռորոշ նշանակություն ունեցել երկրամասի ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Ինքնավար Սյունիքի կառավարության նախագահ Գ. Տեր-Մինասյանը գրում է. «Նժդեհի անունը, իրոք, պաշտամունքի առարկա է դարձել սյունեցիների համար: ...Նրա խոսքը պատգամ է, նրա ներկայությունը՝ հույս ու ոգևորություն: ...Այդ պաշտամունքը իր հերոսի մեջ կերտել է մի տեսակ բեկական կամք, որին հպատակվել շատ է սիրում սյունեցին: Առանց Նժդեհի կամքի տերև չի շարժվի Սյունիքի մեջ, և ժողովուրդը գոհ է, որ այդպես է» (Նժդեհ 2021, 43–44): 1921թ. փետրվարի 21-ին Գորիսի Սբ. Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր մաղթանքից հետո, ժողովրդի հոծ բազմության և զինվորական վաշտերի ներկայությամբ, Ինքնավար Սյունիքի կառավարության կողմից օձվեց սպարապետին տրվելիք կարմիր գոտին և դրոշակը, որից հետո կառավարության նախագահ Գ. Տեր-Մինասյանը օձված գոտին կապեց սպարապետի մեջքին և դրոշակը հանձնեց նրան: Փետրվարի 23-ին Սյունիքի ժողովրդին ուղղված կառավարության կոչում կարդում ենք. «Կառավարությունը ժողովրդի անունով հանձնելով սպարապետին ազատ Սյունիքի եռագույն դրոշակը, դրա հետ նրան հանձնեց և մեր քաղաքական բախտը» (Նժդեհ 2021, 79–80): Այս իրադարձությունը կարծես մի յուրօրինակ երդմնակալության ծիսակատարություն էր, որի ժամանակ Գ. Նժդեհը ուխտեց և երդվեց միշտ բարձր պահել «կառավարության և ժողովրդի կողմից իրեն հանձնված դրոշակը», այսինքն պատվով և պատասխանատվությամբ կատարել իրեն վստահված պետական գործերը՝ երկրի ռազմաքաղաքական դեկը վարելու մանդատը: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Ինքնավար Սյունիքի փաստացի առաջնորդը Գ. Նժդեհն էր:

Սոցիալ-տնտեսական քաղաքականությունը

Համազանգեզուրյան 1-ին համագումարում քննելով մասնավոր, խոշոր սեփականությունների պետականացման հարցը, ընդունվում է դրանք պետականացնելու մասին որոշում. մասնավորապես՝ «վանքապատկան, եկեղեցական և բեգական, նույնպես և ուրիշ խոշոր կալվածատերերի» (Վրացյան 1993, 665): Ավելի ուշ, 1921թ. հունիսի 3-ին, «որոշ առաքելությամբ» Լեռնահայաստան գործուղված Ս. Մելիք-Ստեփանյանը ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին գրում էր. «Այստեղ չկան խաներ, բեգեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկայ այն ամէնը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ոյժը...» (Նժդեհ 2006, 320): Այսպիսով պարզ է դառնում, որ Սյունիք-Լեռնահայաստանի Հանրապետությունը որդեգրել էր սոցիալիզմին մոտ սկզբունքներ, սակայն միաժամանակ պահպանվում էին ազատ շուկայական հարաբերություններ, գյուղացիներիին հող հատկացնելու մոտեցումներ և մասնավոր սեփականության իրավունք

(Նժդեհ 1999, 113; Վրացեան 1967, 233–234), որոնք ավելի բնորոշ էին կապիտալիստական համակարգին: Այս համակարգը, ձևավորված պատերազմական ճգնաժամի պայմաններում, նախատեսված էր միաժամանակ ապահովելու հասարակական արդարություն և ազգային միասնություն՝ հակադրվելով և՛ բոլշևիկյան, և՛ կապիտալիստական ծայրահեղություններին: Լինելով մշտապես պատերազմական դրության մեջ և չկարողանալով հաղթահարել տնտեսական ճգնաժամը՝ Սյունիք-Լեռնահայաստանն, իր կարճատև գոյության ընթացքում չհասցրեց ամբողջությամբ մշակել և իրագործել սոցիալ-տնտեսական հստակ քաղաքականություն: Այնուամենայնիվ, հիմնվելով Գ. Նժդեհի գաղափարների վրա, կարող ենք ենթադրել, որ դրա հիմքում լինելու էր հավասարությունը, արդարությունը և համազգային շահը: Կարևորելով երկրում բնակչության սոցիալական հավասարությունը՝ Գ. Նժդեհը գրում է. «Մի ժողովուրդ, որի որդիները հաուսար չեն օրէնքի և մահուան առջև՝ յաղթական հայրենիք չի ունենայ» (Նժդեհ 2002, 131, 572):

1921 թ. Սահմանադրական բարեփոխումները

Հետագա ռազմաքաղաքական իրադարձությունների՝ մասնավորապես Ինքնավար Սյունիքի տարածքային ընդլայնման, Փետրվարյան ապստամբության պարտության, ինչպես նաև Երևանի Ս. Վրացյանի գլխավորած ժամանակավոր կառավարության և հազարավոր գաղթականների Սյունիք անցնելու հետևանքով, անհրաժեշտություն առաջացավ իրականացնել Ինքնավար Սյունիքի Հանրապետության (որն արդեն սկսել էր կոչվել Լեռնային Հայաստան կամ Լեռնահայաստան) պետական համակարգի որոշակի փոփոխություն:

1921 թ. ապրիլի 26-ին Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի հրավերով Տաթևի վանքում կայացավ Սյունիք-Լեռնահայաստանի հայ ազգաբնակչության արտակարգ համագումար, որին ներկա էին 64 գյուղերից 95 պատգամավորներ և սպարապետ Գ. Նժդեհը: Գ. Նժդեհը մանրամասն զեկուցում է ստեղծված պատմաքաղաքական իրավիճակի մասին, որից հետո ժողովականներն անցնում են օրակարգի խնդիրներին. Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի կազմի հրաժարականը, Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերանշակումը, կառավարության նոր ընտրությունը և հարակից այլ հարցեր: Նոր կառավարություն ձևավորելու նպատակով երկարատև քննարկումներից հետո միաձայն որոշվեց. «քանի որ Սիւնիքի՝ Լեռնահայաստանի ամբողջ բախտը և հայ ազգաբնակչութեան ֆիզիկական գոյութիւնը հաւատացած և վստահած են Սպարապետին, ապագայ ընտրուելիք կառավարութեան կազմը ևս վերապահել նրան» (Նժդեհ 1999, 112):

Ձայների մեծամասնությամբ որոշվում է. 1. Ինքնավար Սյունիքը այսուհետև անվանել Լեռնահայաստան, 2. կառավարության անդամներին համարել նախարարներ, 3. համագումարը հայտարարել որպես Լեռնահայաստանի խորհրդարան, 4. կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրել Գ. Նժդեհին: Ընդմիջումից հետո Գ. Նժդեհը համագումարին գրավոր ներկայացնում է Լեռնահայաստանի կառավարության կազմը.

1. Գ. Նժդեհ՝ վարչապետ, զինվորական և արտաքին գործոց նախարար,
2. Ս. Մելիք-Յոյսյան՝ ներքին գործոց նախարար,

3. Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման նախարար,
4. Բժ. Մ. Մինասյան՝ խնամատարության նախարար,
5. Հ. Տեվեճյան՝ արդարադատության և լուսավորության նախարար,
6. Ա. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստ-հեռագրական նախարար,
7. Բժ. Ս. Եղիազարյան՝ ֆինանսների նախարար,
8. Գ. Տեր-Մինասյան՝ պետական վերահսկիչ նախարար, (Նժդեհ 1999, 113; Վրացեան 1967, 235):

Նախարարություններ: Ապրիլի 27-ի նիստում ընտրվում է Լեոնահայաստանի նոր կառավարություն՝ 7 նախարարներով և սպարապետ Գ. Նժդեհի «նախարարապետությամբ» (Առ 1990, 191–192): Թեպետ սակավ տեղեկություններ են հասել նախարարությունների գործառնությունների մասին, սակայն որոշակի պատկերացում կարելի է կազմել՝ հիմնվելով հանրապետության հռչակագրում ներկայացված դրույթների, համագումարի արձանագրության, նախարարությունների անվանումների և պահպանված այլ տվյալների վրա:

Զինվորական և արտաքին գործոց նախարարություն: Երկրի անվտանգությանը, բանակին և արտաքին քաղաքականությանը վերաբերող գործառնություններն իրականացնում էր Ռեզնակական և արտաքին գործոց նախարարությունը, որի հիմնական խնդիրներն էին՝ երկրի անվտանգության ու պաշտպանության ապահովումը, սահմանների անձեռնմխելիության պահպանումը, հնարավոր զինված հարձակումների կանխումը, պատերազմական գործողությունների վարումը, ինչպես նաև արտաքին բանակցությունների վարումը և միջազգային պայմանագրերի կնքումը: Զինվորական և արտաքին գործոց նախարարությունը ղեկավարում էր նախարարապետ (վարչապետ) Գ. Նժդեհը: Լեոնահայաստանի Հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում գտնվում էր ռազմաքաղաքական բարդ և գերլարված իրավիճակում: Թերևս սրանով էր պայմանավորված, որ այս երկու կարևոր բնագավառները (ռազմական և արտաքին գործեր) կենտրոնացվել էին Գ. Նժդեհի ձեռքում: Բանակը կամ Լեոնահայաստանի Դավիթբեկյան զորքը, փաստացի ներառված էր սույն նախարարության կազմում՝ Գ. Նժդեհի հրամանատարության ներքո: Մեզ է հասել Արտաքին գործոց նախարարության զինանշանը (Վրացեան 1967, 174): Վերջինս ներկայացնում է թևատարած արծիվ՝ ամպերով շրջապատված լեռան գագաթին: Արծիվը (ամենայն հավանականությամբ քարարծիվ) գլուխը թեքել է դեպի աջ և շեշտակի նայում է դիմացը: Լեռնագագաթը, որի վրա թառել է արծիվը, կարող է լինել Խուստուփը կամ պարզապես Սյունիքի լեռնային ռելիեֆը խորհրդանշող մտացածին մի ժայռ:

Ներքին գործոց նախարարություն: Բնակչության ներքին կյանքին, ազգային փոքրամասնություններին և հարակից այլ հարցերին վերաբերող գործառնություններն իրականացնելու էր Ներքին գործոց նախարարությունը: Ներքին գործոց նախարար է նշանակվում ծնունդով Սիսիանից Ս. Մելիք-Յուլյանը, ով նախկինում եղել էր Զանգեզուրի նահանգապետ, Զանգեզուրի գեներալ-կոմիսար և մեծ դերակատարում էր ունեցել Զանգեզուրի ռազմաքաղաքական կյանքում (Սիմոնյան 2017, 345, 379, 1008): Գ. Նժդեհի վկայություններից պարզ է դառնում, որ նախարարը զբաղված էր նաև բանակում և ռազմաճակատներում տիրող ներքին խնդիրներ

րով, պետական պաշտոնյաներին վերաբերող հարցերով (Նժդեհ 2002, 340, 365, 382):

Պարենավորման նախարարություն: Պարենավորումը հանրապետության գլխավոր խնդիրներից էր: Դրանից մեծապես կախված էր երկրի բնակչության առցիալ-տնտեսական դրությունը, ինչպես նաև ռազմական գործողությունների հաջողությունը: Թեպետ Լեոնահայաստանի կառավարության 1921թ. մայիսի 1-ի հռչակագրում նշված էր, որ պարենավորման կարիքը բավարարելու համար կառավարությունը պետք է միջոցներ ձեռք առնի՝ հարևան երկրներից մթերքներ գնելու և երկիր տեղափոխելու համար (Վրացեան 1967, 233), սակայն գործնականում դա հնարավոր եղավ իրականացնել միայն Պարսկաստանից, քանզի մյուս կողմերից երկիրը գտնվում էր շրջափակման մեջ: Պարենավորման նախարարությունը զբաղված էր պարենի ներկրմամբ, ինչպես նաև ժողովրդից պարենային մթերքներ հավաքելով: Նախարարությանն էր վստահված բանակին, ժողովրդին, ղեկավար մարմիններին և գաղթականությանը պարենով ապահովելու հարցերը (Նժդեհ 2002, 152): Պարենավորման հարցը հաճախ լուծվում էր նաև հաջող ռազմական գործողությունների արդյունքում, իսկ երբեմն էլ հենց պարենի հայթայթման անհրաժեշտությունն էր դառնում մարտական գործողություններ սկսելու գլխավոր շարժառիթներից մեկը (Սիմոնյան 2017, 937):

Խնամատարության նախարարություն: Հանրային առողջապահության և բժշկական օգնության հարցերը վերապահված էր Խնամատարության նախարարությանը: Հռչակագրում նշված է. «Կառավարութիւնը ջանք չի խնայելու հանրային առողջապահութիւնը և բժշկական օգնութիւնը դնելու ատլի լաւ հիմքերի վրայ» (Վրացեան 1967, 234): Խնամատարության նախարար է նշանակվում մասնագիտությամբ բժիշկ Մ. Մինասյանը: Սակայն նախարարության հետագա գործունեության մասին ավելի մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել:

Արդարադատության և լուսավորության նախարարություն: Արդարադատության և լուսավորության նախարարությունը պատասխանատու էր մարդու իրավունքների, արդարադատության, կրթության և լուսավորության համար: Նախարարության խնդիրներն էին երկրում օրինականության և արդարադատության հաստատումը, դատավարության մատչելի դարձնելը ժողովրդին, դպրոցների բացումը և կրթական դասընթացների կազմակերպումը, լուսավորական գրականության տարածումը (Վրացեան 1967, 234): Գորիսի «Սասուն» տպարանում 1920-1921թթ. լույս տեսան Ջանգեզուրի գոյապայքարին վերաբերող մի շարք հրատարակություններ, որոնք տարածվում էին ժողովրդի շրջանում (Մուքիայան 2019): Արդարադատության և լուսավորության նախարար է նշանակվում իրավաբանական կրթություն ունեցող Հ. Տեվեճյանը (Այվազյան և այլք 2007, 715):

Հաղորդակցության և փոստ-հեռագրական նախարարություն: Երկրի առջև ծառայած գլխավոր խնդիրներից մեկը հաղորդակցությունն էր: Լեոնահայաստանը գրեթե չուներ հաղորդակցության և փոխադրության բավարար միջոցներ, ինչից մեծապես ծանրացել էր երկրի և բնակչության վիճակը: Արտաքին աշխարհի և երկրի տարբեր շրջանների միջև հաղորդակցության ապահովման համար լուրջ խոչընդոտ էին հանդիսանում ինչպես երկրամասի բնակլիմայական

պայմանները (խիստ կտրուված և լեռնային ուղիներ, ձյունառատ ձմեռներ, վարարուն գետեր), այնպես էլ շարունակ ծավալվող ռազմական գործողությունները: Հաղորդակցության նախարարությունը լիազորված էր ապահովել երկրում հաղորդակցությունը, ներառյալ փոստային, հեռագրական և ճանապարհային ենթակառուցվածքների գործունեությունը (Վրացեան 1967, 233; Նժդեհ 2002, 151):

Ֆինանսների նախարարություն: Լեռնահայաստանը մշտապես գտնվել է ֆինանսական ծանր դրության մեջ: Հանրապետությունը չի ունեցել սեփական դրամական միավոր: Գործածվել են Հայաստանի Հանրապետության թղթադրամները: Երբեմն ապօրինի կիրառվել են նաև խորհրդային թղթադրամներ, ինչին Գ. Նժդեհը խիստ դեմ է եղել՝ պնդելով, որ «...ներքին շուկայում միմիայն պիտի գործածել հայկական դրամ» (Նժդեհ 2002, 384): Սակայն այս խնդիրը վերջնականապես լուծել չի հաջողվում, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների. գնաճ, աշխատավարձերի ուշացում, ներքին դժգոհություններ: Պաշտոնյաները հաճախ աշխատավարձ էին ստանում չեկելով (Նժդեհ 2002, 384, 411):

Պետական վերահսկիչ նախարարություն: Լեռնահայաստանի Հանրապետության պետական վերահսկիչ նախարարությունը, ինչպես Ինքնավար Սյունիքի պետական վերահսկիչ մարմինը, լիազորված էր վերահսկել պետական բոլոր հիմնարկությունների, որոնց թվում նաև բոլոր նախարարությունների աշխատանքներն ու հաշվետվությունները: Հայտնաբերված բոլոր խնդիրները զեկուցվում էին կառավարության ղեկավարին՝ վարչապետ Գ. Նժդեհին: Տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ այս նախարարությունն ուներ որոշակի գերակայություն մյուս նախարարությունների նկատմամբ:

Լեռնահայաստանը՝ որպես Յայաստանի Հանրապետություն

1921թ. հունիսի 1-ին Լեռնահայաստանի Հանրապետության վարչապետ Գ. Նժդեհի և Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի միջև կնքված համաձայնագրով ստեղծվեց նոր կառավարություն Սիմոն Վրացյանի վարչապետությամբ: Գ. Նժդեհը ստանձնում է Զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները (Գեորգեան 1991, 164; Նժդեհ 2002, 164; Սիմոնյան 2017, 924): Լեռնահայաստանի Հանրապետությունը վերանվանվում է Հայաստանի Հանրապետության: Սակայն սա ուներ միայն դե յուրե նշանակություն, որի նպատակն էր կրկին ծնունդ տալ անկախ Հայաստանի Հանրապետության գաղափարին՝ հայցելով շահագրգիռ երկրների օգնությունը: Գ. Նժդեհը, ով ի սկզբանե դեմ էր այս գաղափարին (Նժդեհ 2002, 482–483), շարունակում է մնալ Լեռնահայաստանի Հանրապետության փաստացի ղեկավարը (Սիմոնյան 2017, 925): Ս. Վրացյանը նույնպես այն կարծիքին էր, որ Հայաստանի կառավարությունը բավականաչափ ծանոթ չէ երկրամասին և տեղի բնակչությանը: Այդ իսկ պատճառով նա առաջարկում էր, որ երկրամասի կառավարումը հանձնվի Լեռնահայաստանի կառավարությանը՝ հաշվի առնելով երկրի և տեղի բնակչության շահերը (Նժդեհ 2002, 482): Պետական համակարգի տեսանկյունից որևէ կառուցվածքային լուրջ փոփոխություններ տեղի չունեցան, քանզի, մի կողմից էական քայլեր չձեռնարկվեցին այդ ուղղությամբ, իսկ մյուս կողմից՝ կարճ ժամանակ անց, 1921թ. հուլիսին,

հանրապետության անկումով երկրամասում հաստատվեց խորհրդային իրավա-
կարգ:

Ժողովրդավարական արժեքները Լեռնահայաստանի Հանրապետությունում

Լեռնահայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական արժեքներն ունեին հիմնարար նշանակություն՝ հանդիսանալով պետական կարգի հիմնասյու-
նը: Ժողովրդավարությունը պետական կառուցվածքի այն ձևն է, որի ժամանակ իշխանության գերագույն մարմիններն ընտրվում են ժողովրդի կողմից որոշակի ժամանակով: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությո-
ւունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պե-
տական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար ան-
ձանց միջոցով (Խրոպանյուկ 1997, 154-155; Խաչատրյան 2008, 50; Վաղարշյան
2011, 379-380): Ինքնավար Սյունիքի հիմնադիր համագումարին (1920թ. դեկտեմ-
բերի 25) մասնակցում էին Ջանգեզուրի բոլոր շրջանների գյուղերից ընտրված և
ուղարկված պատգամավորներ: Համագումարը հռչակվեց Ինքնավար Սյունիքի
գերագույն օրենսդիր մարմին, որին վստահվեց երկրամասի լիակատար կառա-
վարումը (Գեորգեան 1991, 126-127): Փաստորեն, «բավական ժողովրդավարա-
կան» կերպով՝ ժողովրդական ընտրությունների միջոցով ձևավորվեց Հանրապե-
տության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը (Զիլֆուլարյան 2008,
27): Համագանգեզուրյան 2-րդ համագումարը, որին մասնակցում էին բոլոր շրջան-
ների գյուղերից ընտրված պատգամավորներ, հայտարարվեց Լեռնահայաստանի
խորհրդարան, որին վերապահված էր կառավարության ղեկավարի՝ վարչապետի
ընտրության լիազորությունը (Նժդեհ 1999, 112): Գյուղական կոմիսարներին և
նրանց օգնականներին նույնպես ընտրում էր տեղի բնակչությունը: Ընտրությունը
հաստատվում էր շրջանային գործադիր մարմնի կողմից (Վրացյան 1993, 663):
Այսպիսով, Լեռնահայաստանի Հանրապետության պետական կառուցվածքը
հիմնված էր ժողովրդավարական սկզբունքների, հավասարության և սոցիալա-
կան արդարության գաղափարախոսության վրա (Ալեքսանյան 2019, 21): Ժողովրդա-
վարական որոշակի դրսևորումների մասին խոսվում է նաև Լեռնահայաստանի
Հանրապետությունում հռչակագրում, որտեղ մասնավորապես նշվում է. «...կա-
ռավարութիւնը պէտք է ձգտի Լեռնահայաստանում ստեղծել իրաւակարգ արդա-
րութիւն...» (Վրացեան 1967, 233): Հռչակագրում կարևոր տեղ է հատկացված նաև
հանրապետության ազգային փոքրամասնություններին՝ «առանց ազգութեան, ցե-
ղի և կրօնի խտրութեան...»: Հստակ ընդգծված է, որ Լեռնահայաստանի կառա-
վարությունը «պէտք է ջանայ սերտ բարեկամական, բարի դրացիական յարաբե-
րութիւններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակուող և սահմանամերձ
ազգութիւնների... հետ» (Վրացեան 1967, 234): Սյունիքից հեռանալուց առաջ
Գ. Նժդեհը խորհրդային իշխանություններից պահանջում էր «անձի և բնակարա-
նի անձեռնմխելիութիւն, մամուլի, խօսքի ու ժողովների ազատութիւն», իսկ կամա-
յական դատավճիռների փոխարեն՝ «արտակարգ յանձնաժողովների վերացում:
Պատասխանատուութիւն միայն դատարանի առաջ» (Նժդեհ 1999, 165): Գ. Նժդեհը

համոզված էր, որ պետությունը ոչ թե պետք է արգելի ժողովրդի ինքնաարտահայտումը, այլ ընդհակառակը՝ վերացնի դրան խոչընդոտող արգելքները՝ խթանելով ժողովրդի ամբողջական ինքնադրսևորմանը (Նժդեհ 2006, 344): Նրա տեսլականում իշխանության լեգիտիմությունը բխում է բացառապես ժողովրդի կամքից՝ մերժելով բոնատիրական ցանկացած դրսևորում: «Ոչ մի անհատ, թեկուզ հանճարեղ, չի կարող ժողովրդին փաթաթել իր կամքը, եթե չի արտահայտում նրա կամքը: Զանգեզուրի ուժը պետք է որոնել ոչ թե իմ ազդեցության, այլ գաղափարապատմական ժառանգորդության մեջ. դարերի ընթացքում լեռնահայությունը հաճախ է ստիպված եղել պաշտպանել իր լեռները՝ խոր գիտակցելով նրանց նշանակությունն իր ինքնապաշտպանության գործում» – գրում է Գ. Նժդեհը (Սիմոնյան 2017, 1030): «Գաղափարապատմական ժառանգորդության» սկզբունքը հաստատում է, որ երկրի պետական համակարգը և քաղաքականությունը պետք է բխեն ժողովրդի պատմական փորձից և ինքնությունից, այլ ոչ թե կառուցվեն արտաքին մոդելների մեխանիկական ընդօրինակման վրա՝ հակադրվելով բոնատիրական կառավարմանը և արտաքին մոդելների կույր կիրառմանը:

Այսպիսով, հանրապետությունում ժողովրդավարական արժեքները հիմնարար նշանակություն ունենին, որոնք իրենց հատուկ արտահայտությունն են գտել Գ. Նժդեհի քաղաքական հայեցակարգում՝ ներկայացնելով ժողովրդավարական, ազգային և տարածքային սկզբունքների օրգանական միասնություն:

Լեռնահայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգը

Պետության ղեկավարի որոշման եղանակով Լեռնահայաստանի Հանրապետությունը խորհրդարանական հանրապետություն էր: Հանրապետությունը կառավարման այն ձևն է, երբ բարձրագույն իշխանությունն իրականացնում են բնակչության կողմից որոշակի ժամկետով ընտրված մարմինները (Խաչատրյան 2008, 45): Խորհրդարանական (պառլամենտական) հանրապետություններում խորհրդարանն օժտված է ոչ միայն օրենսդրական լիազորություններով, այլև կառավարություն ձևավորելու և վերջինիս հրաժարականը պահանջելու իրավունքով (Խաչատրյան 2008, 48; Վաղարշյան 2013, 131): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ թեպետ պետությունը կարող է ունենալ կառավարման որևէ հայտնի ձև, սակայն միաժամանակ այն կարող է էականորեն տարբերվել միևնույն կառավարման ձևն ունեցող այլ պետություններից: Ուստի պետության ձևը կախված է նաև մի շարք այլ գործոններից, որոնցից են տնտեսությունը, ազգային և պատմական ավանդույթները, քաղաքական իրադրությունը, աշխարհագրական դիրքը և այլն (Վաղարշյան 2013, 147): Լինելով խորհրդարանական հանրապետություն, կախված տվյալ պատմաքաղաքական իրավիճակից, ուրույն կառավարման ձև ունեւր նաև Լեռնահայաստանի Հանրապետությունը: Հաշվի առնելով պետական կառավարման համակարգը, նախարարությունների անվանումները և գործառույթները (Ղազինյան և Վաղարշյան 2014, 126–239; Մաֆարյան 2018)՝ ակնհայտ է, որ Սյունիք-Լեռնահայաստանի Հանրապետությունն իր պետական կարգը և ինստիտուտների կառուցվածքը որդեգրել էր Հայաստանի առաջին Հանրապետությունը:

նից: Սակայն տվյալ ժամանակի ռազմաքաղաքական իրադրության, Սյունիքի բնապատմական ավանդույթների և տեղի ժողովրդի ինքնության հետ միաձուլման արդյունքում, այն ձեռք էր բերել յուրահատուկ՝ տեղական դրսևորում, որն ի վիճակի էր դիմագրավելու ժամանակի մարտահրավերներին: Արտաքին քաղաքականությունը և ռազմական գործերն ամբողջությամբ գտնվում էին Գ. Նժդեհի ղեկավարության ներքո, քանզի Լեոնահայաստանի Հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում գտնվում էր ռազմաքաղաքական բարդ և գերլարված իրավիճակում: Հանրապետության բնակչությունը հավատացած էր, որ միայն Գ. Նժդեհը կարող է երկիրը դուրս բերել այս իրավիճակից: Ուստի և՛ բնակչությունը, և՛ զորքը, և՛ ղեկավար մարմինները վստահում և հավատում էին սպարապետին: Գ. Նժդեհի իշխանությունը երբեք չվերածվեց ռազմական ռեժիմի: Ավելին, նրա քաղաքական-իրավական հայեցակարգի հիմքում ընկած էր ժողովրդավարական սկզբունքները: Անգամ ռազմաքաղաքական ծանր ճգնաժամի պայմաններում Գ. Նժդեհին հաջողվեց պահպանել և գործնականում կիրառել ժողովրդավարական արժեքները՝ դրանք դարձնելով երկրամասի կառավարման հիմնաքարը:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է նշել, որ իր գոյության կարճատև ժամանակահատվածում Սյունիք-Լեոնահայաստանը կարողացավ ձևավորել պետությանը բնորոշ մի շարք ինստիտուտներ, ունենալ կայուն պետական համակարգ: Պետական կառավարման ձևով Լեոնահայաստանը խորհրդարանական հանրապետություն էր, որտեղ սակայն սպարապետն ուներ «ատանձնաշնորհյալ» կարգավիճակ: Պետական կառավարման համակարգում առաջնակարգ դերակատարում ունեին խորհրդարանը, կառավարությունը և սպարապետը: Հանրապետության գլխավոր օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, ընտրվում էր բնակչության կողմից: Խորհրդարանն էր ընտրում կառավարության ղեկավարին և սպարապետին: Սպարապետին նշանակում և պաշտոնից ազատում էր խորհրդարանը կամ կառավարությունը, իսկ ռազմական բոլոր գործերում սպարապետը հաշվետու էր կառավարությանը: Լեոնահայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական արժեքները հիմնարար նշանակություն ունեին և հանդիսանում էին պետական համակարգի հիմնասյունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տպագիր սկզբնաղբյուրներ

- ԱԻՈ 1990 – Առ, Նժդեհ. *Կեսանքն ու գործունեությունը*, Պէյրոթ, «Հեղափոխական Ալպում», 1990:
- ԳԷՈՐԳԵԱՆ 1991 – Գեորգեան Վ., *Լեոնահայաստանի հերոսամարտը*, Երևան, «Ազատ խոսք», 1991:
- ՆԺԳԵՀ 1999 – Գարեգին Նժդեհ, *Ազատ Սյունիք*, Պէյրոթ, Վահէ Մէրեան հրատ., 1999:
- ՆԺԳԵՀ 2002 – Գարեգին Նժդեհ, *Երկեր*, հ. 2, Երևան, «Լույսաս» ՍՊԸ տպ., 2002:
- ՆԺԳԵՀ 2006 – Գարեգին Նժդեհ, *Հատրնսիր*, Երևան, «Ամարաս» հրատ., 2006:
- ՆԺԳԵՀ 2021 – Գարեգին Նժդեհ, *Իմ պարասիանը*, Երևան, Հեղ. հրատ., 2021:

ՎՐԱՑԵԱՆ 1967 – Վրացեան Ա., *Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, սպրումներ, հ. 2, Բէյրութ, «Համազգային» տպ., 1967:*

ՎՐԱՑՅԱՆ 1993 – Վրացյան Ա., *Հայասրանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան» հրատ., 1993:*

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԼԵԶՍԱՆՅԱՆ 2019 – Ալեքսանյան Ա., Գարեգին Նժդեհի քաղաքական իրավական հայացքները, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, № 2(2), 17–28:

ԱՅՎԱԶՅԱՆ ԵՎ ԱՅԼԲ 2007 – Այվազյան Հ. և ուրիշներ, *Ով ով է. հայեր (կենսագրական հանրագիտարան), հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2007:*

ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ 2008 – Զիլֆուղարյան Մ., *Լեոնահայասրանի Հանրապետությունը. Սյունիքի սահմանադրությունը*, Գորիս, ԳՊՀ հրատ., 2008:

ԻՍԱԶԱՏՐՅԱՆ 2008 – Խաչատրյան Ս., *Պետության և իրավունքի տեսություն. հարցեր և պատասխաններ*, Երևան, «Կախա» հրատ., 2008:

ԻՍԱԶԱՏՐՅԱՆ ԵՎ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆ 2004 – Խաչատրյան Ս., Զիլֆուղարյան Մ., *Լեոնահայասրանի հայկական պետությունը. Սյունիքի սահմանադրությունը*, Երևան, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2008:

ԻՐՈՂԱՆՅՈՒԿ 1997 – Խրոպանյուկ Վ., *Պետության և իրավունքի տեսություն*, Երևան, «ԳՈՇ» հրատ., 1997:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2022 – Հարությունյան Ա., Ինքնավար Սյունիքի և Լեոնահայաստանի իրավաքաղաքական կարգավիճակը, *Մեսրոպ Մաշտոցի համալսարանի լրագրոս*, Երևան, «Լիմուշ» հրատ., 2022, № 1 (27), 107–117:

ՂԱԶԻՆՅԱՆ ԵՎ ՎԱՂԱՐՇՅԱՆ 2014 – Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., *Հայոց իրավունքի պատմության հիմնահարցեր: Հին շրջանից մինչև մեր օրերը*, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ 1944 – Մալխասեանց Ա., *Հայերէն բացարթական բառարան, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՌ պետ. հրատ., 1944:*

ՄԱՖԱՐՅԱՆ 2018 – Մաֆարյան Գ., Հայաստանի առաջին հանրապետության պետաիրավական համակարգի ձևավորման և զարգացման վերաբերյալ հիմնական մոտեցումները, *«Հայասրանի Հանրապետություն–100». միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018, 142–162:

ՄԻՄՈՆՅԱՆ 2017 – Միմոնյան Ա., *Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ.*, Երևան, ԵՊՀ հրատ., 2017:

ՍՈՒՔԻԱՅԱՆ 2019 – Սուքիասյան Հ., Գորիսի «Սասուն» տպարանի գրահրատարակչական գործունեությունը, *Սյունիքը կրթության և մշակույթի օջախ: Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր*, Երևան, «Արմավ», 2019, 35–44:

ՎԱՂԱՐՇՅԱՆ 2011 – Վաղարշյան Ա., *Պետության և իրավունքի տեսություն-2*, Երևան, Հեղ. հրատ., 2011:

ՎԱՂԱՐՇՅԱՆ 2013 – Վաղարշյան Ա., *Պետության և իրավունքի տեսություն-1*, Երևան, Հեղ. հրատ., 2013:

Gor Ghazaryan

MA in Armenian History, Yerevan State University
ghazaryan3329@gmail.com

THE STATE ORDER OF THE REPUBLIC OF MOUNTAINOUS ARMENIA

Keywords: Republic of Mountainous Armenia, Syunik, Zangezur, state order, government, parliament, Garegin Nzhdeh

During its brief existence, Syunik-Mountainous Armenia succeeded in establishing key state institutions and maintaining a stable governmental structure. Politically, Mountainous Armenia was a parliamentary republic, though the sparapet (commander-in-chief) held a privileged status. The state governance system primarily consisted of three pillars: the parliament, the government, and the sparapet. The republic's supreme legislative body, the parliament, was elected by the population. It, in turn, appointed the government and the sparapet. The sparapet could be appointed or dismissed by either the parliament or the government, and in all military matters, he was accountable to the government. Democratic values were fundamental to the Republic of Mountainous Armenia and served as the cornerstone of its state system.

Гор Казарян

*Выпускник магистратуры кафедры истории Армении
Ереванского государственного университета*
ghazaryan3329@gmail.com

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ РЕСПУБЛИКИ ГОРНОЙ АРМЕНИИ

Ключевые слова: Республика Горная Армения, Сюник, Зангезур, государственный строй, правительство, парламент, Гарегин Нжде

В краткий период своего существования Сюник-Горная Армения сумела сформировать ряд институтов, характерных для государства, и создать устойчивую систему государственного управления. По форме государственного устройства Горная Армения являлась парламентской республикой, где, однако, спарпет обладал "особым привилегированным" статусом. В системе государственного управления ключевую роль играли парламент, правительство и спарпет. Высший законодательный орган республики – парламент – избирался населением. Именно парламент формировал состав правительства и назначал спарпета. Спарпет назначался на должность и освобождался от нее либо парламентом, либо правительством, при этом по всем военным вопросам спарпет подчинялся правительству. В Республике Горная Армения демократические ценности имели основополагающее значение и являлись краеугольным камнем государственной системы.